



*California's protection & advocacy system  
Toll-Free (800) 776-5746*

## Ընտրության խորհրդատվության և դուրսգրման պլանավորման Ձեր իրավունքները ըստ MDS 3.0-ի Q բաժնի

---

*Վերջին թարմացում՝ հունվար 2021թ., Հրապ. #5497.10  
Armenian*

### **MDS-ի գնահատման պահանջները**

Medicare-ի կամ Medicaid-ի ֆինանսավորում ստացող բոլոր ինամքի կենտրոնները պետք է կատարեն ինամքի կենտրոնի բոլոր ինամառուների գնահատում Տվյալների նվազագույն հավաքածուի (անգլ. Minimum Data Set, MDS) կազմման համար: MDS-ն օգտագործվում է ինամառուի ֆունկցիոնալ կարողությունների մասին տեղեկություններ ստանալու, առողջական խնդիրները բացահայտելու և անձի ինամքի պլանի մշակմանը, այդ թվում՝ դուրսգրման պլանավորմանն օժանդակելու նպատակով:

Ամբողջական MDS գնահատումն իրականացվում է ինամքի կենտրոն ընդունվելուց հետո ամենաուշը 14 օրվա ընթացքում, երբ նկատվում է ինամառուի ֆիզիկական կամ հոգեկան առողջության փոփոխություն և տարեկան, իսկ եռամսյակային գնահատումն իրականացվում է ավելի կարճ տարբերակով: MDS-ի Q բաժինը պետք է կիրառվի յուրաքանչյուր համապարփակ գնահատման ժամանակ: Ինամառուն կամ նրա ներկայացուցիչը (եթե ինամառուն ի վիճակի չէ պատասխանել) կարող է որոշել իրաժարվել եռամսյակային (ոչ համապարփակ) գնահատումների հարցերին պատասխանելուց: Սակայն ինամառուները կարող են փոխել իրենց միտքը և ցանկացած ժամանակ՝ անկախ MDS-ի գնահատման ժամանակացույցից,

պահանջել տեղեկություններ համայնք վերադառնալու հնարավորության վերաբերյալ:

Դուրսգրման պլանավորումը վերաբերում է MDS գնահատման գործընթացի Q բաժնին (մաս): **MDS-ի Q բաժնում պահանջվում է, որ խնամքի կենտրոնները խնամառուներին հարցնեն՝ արդյոք նրանց հետաքրքրում է համայնք տեղափոխվելը: Եթե խնամառուն պատասխանում է «այո» (այսինքն, խնամառուն ցանկանում է ավելի շատ տեղեկություններ իմանալ համայնք տեղափոխվելու մասին), խնամքի կենտրոնը պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում խնամառուին ուղեգրել Տեղական կոնտակտային գործակալություն (անգլ. Local Contact Agency, LCA):**

Եթե խնամառուն ցանկություն ունի վերադառնալու համայնք, MDS գնահատման արդյունքում ստացված պատասխանը պետք է նշվի խնամքի ծրագրում, և պետք է իրականացվի խնամքի պլանավորում համայնք տեղափոխվելու հնարավորությունները գնահատելու համար: Դա սովորաբար ենթադրում է խնամքի կենտրոնի սոցիալական աշխատողի կամ դուրսգրման պլանավորման մասնագետի այց՝ ապագա դուրսգրման պլանավորումը և համայնքում ապրելու տարբերակները քննարկելու համար: MDS-ի Q բաժնի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները տե՛ս այստեղ՝ [https://downloads.cms.gov/files/mds-3.0-rai-manual-v1.17.1\\_october\\_2019.pdf](https://downloads.cms.gov/files/mds-3.0-rai-manual-v1.17.1_october_2019.pdf):

## **Տեղական կոնտակտային գործակալություն (LCA)**

LCA-ը ուղեգիրն ստանալուն պես պարտավոր է կապ հաստատել խնամքի կենտրոնի խնամառուի հետ, խոսել նրա հետ դուրսգրման պլանավորման և ծառայությունների մասին, որպեսզի անձը հնարավորություն ունենա ապրել համայնքում՝ ստանալով համապատասխան աջակցությունն ու ծառայությունները: Խնամքի կենտրոնի շատ խնամառուներ, ստանալով աջակցությունը և ծառայությունները, գուցե ի վիճակի լինեն վերադառնալ համայնք: LCA-ը և խնամքի կենտրոնը պարտավոր են միասին աշխատել՝

աջակցելու այն խնամառուների՝ համայնք տեղափոխմանը, որոնք ի վիճակի են տեղափոխվել: Կարող եք կապվել ձեր վարչաշրջանի LCA-ին՝ այցելելով

<https://www.cdph.ca.gov/Programs/CHCQ/LCP/Pages/Local-Agencies-for-MDS-3-0-Section-Q.aspx>:

## **Ինչպես ստանամ իմ MDS-ի Q բաժնի գնահատման տեղեկությունները**

Դուք կարող եք խոսել խնամքի կենտրոնի ձեզ կցված սոցիալական աշխատողի հետ, որպեսզի պարզեք, թե երբ է իրականացվելու MDS-ի Q բաժնով նախատեսվող ձեր հաջորդ գնահատումը և համոզվեք, որ խնամքի կենտրոնը MDS-ի Q բաժնով կատարված ձեր գնահատման փաստաթղթում գրանցել է ճիշտ տեղեկություններ համայնք տեղափոխվելու ձեր հետաքրքրության մասին:

## **Ինչ անել, եթե ձեզ հնարավորություն չեն տվել տեսնել MDS-ի Q բաժնի տեղեկությունները կամ դուրսգրման պլանավորումը**

Եթե խնամքի կենտրոնը չի տրամադրում MDS-ի Q բաժնով իրականացված ձեր գնահատման տեղեկությունները, կարող եք կապվել մարդու իրավունքների ձեր տեղական պաշտպանի գրասենյակի հետ՝ զանգահարելով **1-800-231-4024**: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն աշխատում է շուրջօրյա՝ շաբաթվա բոլոր օրերին՝ ընդունելու հեռախոսազանգերը և ընթացք տալու խնամառուների բողոքներին: Ձեր տարածքում մարդու իրավունքների պաշտպանի տեղական գրասենյակը կարող եք գտնել նաև՝ այցելելով

[https://www.aging.ca.gov/Find\\_Services\\_in\\_My\\_County/](https://www.aging.ca.gov/Find_Services_in_My_County/):

Լրացուցիչ կարող եք բողոք ներկայացնել նաև Կալիֆորնիայի Չանրային առողջապահության դեպարտամենտին (CDPH): Կալիֆորնիայի Չանրային առողջապահության դեպարտամենտը պատասխանատու է խնամքի կենտրոնների լիցենզավորման և վերահսկողության համար: CDPH-ին բողոք ներկայացնելու համար

կարող եք կապվել Լիցենզավորման և հավաստագրման վարչության Ձեր տարածքի շրջանային գրասենյակի հետ: Հասցեների և կոնտակտային տվյալների համար անցեք հետևյալ հղումով՝ <https://www.cdph.ca.gov/Programs/CHCQ/LCP/Pages/DistrictOffices.aspx>:

Կարող եք դիմել նաև Կալիֆորնիայի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությանը 1- 800-776-5746 հեռախոսահամարով:

MDS-ի Q բաժնի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել հետևյալ հղումով՝ <https://www.disabilityrightsca.org/publications/enhanced-discharge-planning-rights-for-nursing-facility-residents-under-mds-30-section>

Մենք ցանկանում եք լսել ձեր կարծիքը: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցաթերթիկը և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում: <https://docs.google.com/forms/d/1d6ezTI2M5UMAWU66exLbc1SQ9wDPzvtuS3AGR4-cgwE/viewform?c=0&w=1>

*Կալիֆորնիայի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս հետևյալ հղումով՝ <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>*